



Եղիշե Չարենց

Հիմի շատ են երգիչները — հոգու ուզած տաղը չկա

Հիմի շատ են երգիչները հոգու ուզած տաղը չկա,
Ամենայն տեղ խնդություն է՝ սրտի ուզած խաղը չկա,
Ուր ոտ կոխես բաղ է հիմի, շահնշահի բաղը չկա,
Ման են գալիս քուչա-քուչա սիրեկանի թաղը չկա:

Ես ո՞ւմ ասեմ երգս հիմի՝ ոչ դու կուգես, ոչ էլ յաղը,
Թեկուզ անուշ տաղերիցս չէ հեռացե Աստու մատը.
Ոչ-ով ուզեց ականջ դնի, իմանա սրտիս գանգատը՝
Ուզում են սիրտս հովանա՝ արտաստիքի շաղը չկա:

Ասում են թե՝ թողնեմ սագը, ամենքի պես մարդ ըլիմ ես,
Թե որ վարդ եմ փուշ ունենամ, անհասնելի վարդ ըլիմ ես,
Դուշմանի հետ դուշման ըլիմ, վատերի հետ վատ ըլիմ ես,
Որ ինձ կարոտ ամեն անգամ ասեն՝ սուփրի աղը չկա:

Մարդիկ են փուշ ու բեղամաղ աշխարհը լեն, լավ է, Չարեն՛ց,
Մարդու խոսքը մարդու սրտին անհանգչելի ցավ է, Չարեն՛ց,
Ականջ արա ազդու խոսքիս՝ ասում են թե բավ է, Չարեն՛ց,
Քեզ չեն սիրի, քանի որ քո սրտի տված դաղը չկա: